

ՆՈՐԻՆ ՎԵՀՍՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏԲՈՒԹԻՒՆՆԵՐԻԾ.

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Թադէոս վարդապետի անունով, որով վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 18 ապրիլի, թ. 632:

Կոնդակ Սեանի միաբան Տ. Եղիշէ վարդապետի անունով, որով վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 20 ապրիլի, թ. 651:

Կոնդակ Մայր Աթոռի տպարանի վարչութեան անդամ Տ. Վարդան վարդապետի անունով, որով ծաղկեայ փիլոն կրելու իրաւունք շնորհուեց: 25 ապրիլի, թ. 688:

Կոնդակ Նոր-Ջուղայի Եռայի քահանայ Յովհաննիսեանի անունով, որով աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց: 25 ապրիլի, թ. 691:

Կոնդակ Նոր-Ջուղայի Կարեզին քահանայ Կիրակոսեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք տրուեց: 25 ապրիլի, թ. 692:

Կոնդակ Նոր-Ջուղայի Կարապետ քահանայ Թումիկեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 25 ապրիլի, թ. 693:

ՍԻՆՅՈՒՄԻ ՕՐԱԿՐԵՐԻՆ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինյոյր՝ քննութեան անելով Ղարաբաղի Կոնսիստորիայի գրամարկղից հինգ հազար շորս հարիւր ութսուն վեց սուրլի 35 կոպէկ պակասելու գործը՝ դատւ., որ ամբողջ պատասխանատուութիւնը ընկնում է Կոնսիստորիայի դանձապահ Յարութիւն աւագ քահանայ Վարդապետեանի վրայ՝ որուեց. պատուիրել Ղարաբաղի Կոնսիստորիային պահանջել Յարութիւն աւագ քահանայ Վարդապետեանից պակասող հինգ հազար շորս հարիւր ութսուն և վեց սուրլի